ՄԵԼՔՈՆ ԿՅՈՒՐՃՅԱՆ

Դր. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Գրական այն սերունդը, որ զարկ տվեց XIX դարի ութսունական թվականների արևմտահայ ռեալիստական շարժմանը, աչքի է ընկնում ստեղծագործական վառ անհատականություններով. դրանց մեջ իր ուրույն տեղն ունի նաև Մելքոն Կյուրճյանը, որը հայտնի է առավելապես Հրանդ ծածկանունով։

Նա պատկանում է ժողովրդի ծոցից ելած այն առաջավոր մտավորականների թվին, ովքեր իրենց անձնական կյանքի իմաստը գտան հանրաշահ գործունեության մեջ։ Պատահական չէ, որ Կյուրճյանը իր աշխատանքային ուղին սկսեց որպես մանկավարժ և երկար տարիներ զբաղվեց մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործով։

Հարգված ու սիրված ուսուցիչ էր Կյուրճյանը, երբ սկսեց իր գրական-հրապարակախոսական գործունեությունը։ Այդ ուղղությամբ նրա կատարած նախնական քայլերը ժամանակակիցների կողմից առանձին ուշադրության չարժանացան, որովհետև դրանք մեծ մասամբ գրաբարալեզու թոթովանքներ էին։ Բայց որքան մեծ եղավ բոլորի զարմանքը, երբ շատ չանցած «Մասիս» և «Արևելք» պարբերականների էջերում երևացին պանդուխտների կյանքն արտացոլող նրա գրական նամակները, նկարագրական հուզիչ պատկերներ՝ «Պանդուխտի կյանքեն» ընդհանուր խորագրով։ Դրանցով անհայտ Մելքոն Կյուրճյանը գրական հռչակ ստացավ որպես Հրանդ, մի անուն, որն այնուհետև պարձով անբաժան ութսունականների ռեալիստական շարժումից։ Նրանց հետ և նրանց շարքերում Կյուրճյանը ծավալեց բազմակողմանի գործունեություն. նա հանդես եկավ գրական-հրապարակախոսական և գեղարվեստական երկերով, որոնցով արտահայտեց աշխատավոր մարդկանց, հատկապես պանդուխտների շահերն ու տրամադրությունները։ Դրան զգալիորեն նպաստեց այն հանգամանքը, որ Կյուրճյանը, լինելով գավառի հարազատ ծնունդ, իր ողջ էությամբ կապված էր ժողովրդական զանգվածների հետ ու նրանցից էր քաղում իր ստեղծագործական ներշնչումները։ Նրան հաջողվեց սեղմ ու սրտահույզ տողերով, անկեղծ շեշտերով ու գունեղ երանգներով վերարտադրել իր պանդուխտ հայրենակիցների վիշտն ու տառապանքը, տրտունջն ու բողոքը...

Սակայն սխալված չենք լինի, եթե ասենք, որ Մելքոն Կյուրճյանը չուսումնասիրված և գրեթե մոռացության մատնված մի հեղինակ է։ Դրանում, անշուշտ, նվազ դեր չի խաղացել այն պարագան, որ նրա երկերի մեծ մասը լույս է տեսել 80—90-ական թթ. պարբերական մամուլում («Մասիս», «Արևելք», «Հայրենիք», «Բյուզանդիոն» և այլն) և երկար ժամանակ թաղված մնացել նրա էջերում։ Ավելացնենք և այն, որ մինչև օրս էլ հայտնաբերված չեն Կյուրճյանի մի շարք ստեղծագործություններ ու նամակներ, որոնց մի մասը ձեռագիր վիճակում, ըստ երևույթին, կորել է հեղինակի ձերբակալությունների ժամանակ կատարված խուզարկությունների ընթացքում։ Էլ չենք խոսում նրա կյանքի ու գործունեության անհայտ էջերի մասին, որոնք նույնպես կարոտ են լուրջ ուսումնասիրության ու լուսաբանման։

Մելքոն Կյուրճյանը ծնվել է 1859 թ. սեպտեմբերին, Բալուի Հավավ գյուղում, որտեղ և ստացել է իր նախնական կրթությունը։ Ուսման ծարավը ստիպում է նրան, հակառակ հարազատների կամքի, տասնմեկ տարեկան հասակում գնալ Պոլիս և հաճախել Սկյուտարի ճեմարանը, ուր սովորում է հինգ տարի։ 1875 թ. Կյուրճյանը փոխադրվում է նույն թաղի ս. Խաչ վարժարանը, որ-

տեղ սովորում է Հ. Մբրմբրյանի, Վ. Թորգոմյանի և այլոց հետ միասին՝ աշակերտելով ճանաչված հայկաբան ու «պուետ» Խ. Միսաքյանին։

Սկսած 1878 թ. Կյուրճյանը զբաղվում է ուսուցչությամբ՝ դասավանդելով հայոց լեզու (գրաբար և աշխարհաբար), հայ հին մատենագրություն, գրականություն և հայոց պատմություն տարբեր դպրոցներում։ Իր մանկավարժական գործունեության ընթացքում նա դրսևորում է արտակարգ բարեխղճություն ու եռանդ թե՛ ուսուցման և թե՛ դաստիարակության ասպարեզում։ Դրա համար էլ «աշակերտությունը կը սիրեր զինք»[1],— վկայում է ժամանակակիցներից մեկը։ Կյուրճյան-մանկավարժի մասին խոր համակրանքով է արտահայտվել նաև նրա աշակերտ, հետագայում մեծանուն լեզվաբան Հր. Աճառյանը, որը Սամաթիայի դպրոցի բարձր դասարանում ուսանելիս սովորել է գրաբար ու հայ հին մատենագրության պատմություն։ Տարիներ անց նա ջերմ սիրով է մտաբերում իր ուսուցչին[2]։ Եվ պատահական չէ, որ իր «Արմատական բառարանի» վերջին հատորի սկզբում անվանի գիտնականը հայերենի իր ուսուցիչների նկարների շարքում երկրորդ տեղը հատկացրել է Կյուրճյանին[3]։

Պոլսի թաղային վարժարաններում ուսուցիչ էր Կյուրճյանը, երբ սկսեց իր գրական-հոգևորակախոսական փորձերը։ Նրա առաջին հոդվածները, որ նվիրված էին ազգային դաստիարակության հարցերին, լույս տեսան 1883 թ. «Հայրենիք» օրաթերթում։

Հետաքրքրական է նշել, որ Կյուրճյանն սկզբնապես եղել է գրաբարամոլ. ոչ միայն հոգևորակախոսական հոդվածներում, այլև թարգմանության ասպարեզում նա կրքոտությամբ պաշտպանում էր գրաբարը։ Այդ են վկայում նաև «Նոկրագունդ» հանդեսում 1885 թ. նրա հրապարակած թարգմանական բանաստեղծությունները։

Ապագա գրողի ստեղծագործական տաղանդը, սակայն, բացահայտվեց նախ՝ «Արևելք» օրաթերթի, ապա՝ «Մասիս» շաբաթաթերթի էջերում, երբ իրար ետևից լույս տեսան նրա մի շարք քրոնիկներն ու հոդվածները։ Նշված շաբաթաթերթում է, որ Կյուրճյանը հրատարակեց «Պանդուխտի կյանքեն» նամակաշարը, որը բացառիկ ջերմ ընդունելություն գտավ ընթերցողների շրջանում։ Ամենքը ողջունում ու շնորհավորում էին նորընծա հեղինակին՝ նրա մեջ տեսնելով խոստումնալի տաղանդ։ Առաջին հուզվողն ու ոգևորվողը, սակայն, եղավ Ա. Արփիարյանը, որի հանձնարարությամբ ու քաջալերանքով էլ Կյուրճյանը գրել է այդ նամակաշարը։

«Մասիսից» հետո Կյուրճյանը ակտիվորեն աշխատակցում է «Հայրենիք» օրաթերթին, որտեղ տպագրում է հրապարակախոսական, կիսագեղարվեստական բազմաթիվ հոդվածներ ու ակնարկներ։ Դրանցից հիշատակության արժանի են «Ագրակին ուրիշ կողմը», «Ծպիտ կերպարանքը», «Պատիժը» և այլն։ Այդ և ուրիշ գործերի մեջ արդեն հեղինակը դրսևորում է իր ստեղծագործական խառնվածքին բնորոշ գծեր՝ լեզվի պարզություն, դիտելու և պատկերելու ինքնատիպություն, հուզական շեշտ և նկարագրական սեղմություն։

Պանդուխտի կյանքից առնված նամակներին հաջորդեց պատմվածքների մի նոր շարք, ուր հեղինակը ոգեկոչում է իր մանկության հիշատակները։ Հուշային վերապրումներից հյուսված այդ շարքը մի տեսակ շարունակություն է նախորդ նամակաշարի և շատ կողմերով լրացնում ու ամբողջացնում է այն։

Հայկական կոտորածների ժամանակ (1895—1896 թթ.) Կյուրճյանը ևս հետապնդվում է սուլթանական կառավարության կողմից և առժամապես այս ու այնտեղ թաքնվելուց հետո ընկերների ու բարեկամների աջակցությամբ 1896 թ. օգոստոսին փախչում Բուլղարիա և հաստատվում Վառնայում։ Այստեղ օրիորդ Արմենուհի Մինասյանի հետ նա հիմնում է Արծրունյան վարժարանը՝ գաղթականների երեխաներին անուսում չթողնելու համար։ Դրա հետ միաժամանակ նա եռանդուն կերպով աշխատակցում է Ե. Սրմաքեշխանլյանի (Երուխան) «Շարժում» լրագրին զանազան ծածկանուններով։

1 «Հուսաբեր», Կահիրե, 1944, № 3, էջ 5։

2 Հր. Աճառյան. Կյանքիս հուշերից. Երևան, 1967, էջ 30—31։

3 Հր. Աճառյան. Արմատական բառարան. է, Երևան, 1935։

Սակայն չկարողանալով համակերպվել գաղութի պայմաններին՝ Կյուրճյանը ժամ առաջ երազում էր վերադառնալ երկիր։ Երկու տարի տարագրության մեջ տառապելուց հետո, մտածելով, թե խստություններն արդեն մեղմացել են, նա, հակառակ կնոջ և բարեկամների խորհրդին, 1898 թ. օգոստոսին վերադառնում է Թուրքիայի մայրաքաղաք։ Բայց նոր էր ոտք դրել Պոլիս, երբ ձերբակալվում ու նետվում է բանտ։ Վեց ամիս բանտում տառապելուց հետո նա աքսորվում է Գասթեմունի, որտեղ և ապրում է շուրջ տասը տարի։

Աքսորավայրից Կյուրճյանը շարունակում է աշխատակցել պոլսահայ թերթերին («Սուրհանդակ», «Բյուզանդիոն» և այլն), որոնց էջերում հրապարակում է գեղարվեստական-հրապարակախոսական երկեր, բանասիրական ու լեզվաբանական հոդվածներ։ Ուշադրավ է «Պոնտացի» և «Թղթակից ի Պոնտոս» ծածկանուններով Կյուրճյանի բանավեճն իր երբեմնի դասընկեր Եղիշե արք. Դուրյանի հետ՝ Շնորհալու կրոնական բանաստեղծությունների աշխարհաբար թարգմանության կապակցությամբ։ Այդ բանավեճի ընթացքում Կյուրճյանը դրսևորում է նյութի քաջատեղյակություն ու բանասիրական հմտություն։ Նա համոզիչ կերպով ցույց է տալիս բնագրից կատարված բազմաթիվ շեղումներ, թեղմբոնումներ ու սխալներ, որոնց հետևանքով չի պահպանվել «Հեղինակի ոգին ու երգին հարազատությունը»[4]։

1908 թ. հուլիսին Թուրքիայում կատարված պետական հեղաշրջումից հետո Կյուրճյանը վերադառնում է Պոլիս և զբաղվում մանկավարժական գործունեությամբ։ Նախ՝ Ղալաթիայի Կեդրոնական, ապա՝ Սկյուտարի Կարապետյան և Պերպերյան վարժարաններում նա ստանձնում է ուսուցչի պաշտոն և վայելում աշակերտների հարգանքն ու սերը։ «Միջահասակ, գիրուկ, այծեմորուս և ակնոցակիր»[5] այդ մարդը, որ ավանդում էր հայերեն, մեծապես խանդավառված էր իր աշխատանքով և հայրենաշունչ խոսքով ոգեշնչում էր իր սաներին, նրանց մեջ ամրապնդելով ջերմ սեր դեպի մայրենի լեզուն ու գրականությունը։

Մանկավարժական աշխատանքին զուգընթաց Կյուրճյանն զբաղվում է նաև գրական-հրապարակախոսական եռուն գործունեությամբ։ Նա Երուխանի հետ միասին նոր շունչ ու ոգի է հաղորդում «Արևելքին», հրապարակելով բազմաբնույթ հոդվածներ, ակնարկներ և այլն։

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց հետո էլ Կյուրճյանը շարունակում էր իր մանկավարժական աշխատանքը Պերպերյան վարժարանում, բայց առդեն «մտատանջ էր, դյուրագրգիռ»[6]։ Նա զգում էր նախապատրաստվող դավը, որ սպառնում էր առնմտահայությանը։ Նույնիսկ դիտեր, թե ի՞նչ ադետ է սպասվում մտավորականությանը. «... բոլորիս ցանկը առնված է,— ասել է նա իր աշակերտներից մեկին,— մեկիկ մեկիկ, իմ անունս ալ մեջ. անձամբ կարդացի, տասնհինգերորդն եմ շարքին. դատապարտված ենք. կրնանք ձերբակալվիլ մեկ օրեն մյուսը...»[7]։ Աշակերտի այն հարցին, թե «ի՞նչ կը մտածեք ուրեմն», Կյուրճյանը պատասխանում է. «Ի՞նչ կրնանք մտածել, ինչ որ բյա այս բաղմությունը, մենք ալ անոր հետ...»[8]։

Եվ իրոք, նա չբաժանվեց իր ժողովրդից և կիսեց նրա մռայլ ճակատագիրը։ 1915 թ. ապրիլին, ի թիվս շատերի, ձերբակալվում և Այաշ է աքսորվում նաև Կյուրճյանը։ Չորս ամիս բանտիդ բանտ, աքսորից աքսոր փոխադրվելով ու տառապելով՝ նա ևս զոհ է դառնում թուրքական յաթաղանին։

Կյուրճյանի վաղ շրջանի ստեղծագործական մտքի առավել հասուն պտուղը «Պանդուխտի կյանքեն» նամակաշարն է (1888—1892), որով նա ուղղակիորեն արձագանքեց ութսունականների ռեալիստական շարժմանը և դարձավ նոա ակտիվ մարտիկներից մեկը։

---

4 «Բյուզանդիոն», 1905, № 2, 689։

5 «Կյանք և արվեստ», 1938, № 4, էջ 95։

6 Նույն տեղում, էջ 97։

7 «Հուսաբեր», 1944, № 3, էջ 4։

8 Նույն տեղում։

Ուշագրավ է, որ իր գրական նախափորձերով մինչ այդ գրեթե աննկատ մնացած Կյուրճյանին, ինչպես ասվեց, առաջ քաշեց ու խրախուսեց այդ շարժման կազմակերպիչն ու ոգեշնչողը՝ Ա. Արփիարյանը։ Նա առաջինը նկատեց Կյուրճյանի ստեղծագործական հակումները, հատկապես նրա կապը պանդուխտների հետ և հանձնարարեց նրան գրել հենց այդ արհամարհված մարդկանց մասին, նպատակ ունենալով գրականությունը մատուցել բուն ժողովրդին։

Եվ ահա «Մասիսի» 1888 թ. նոյեմբերի 28-ի համարում երևում է Կյուրճյանի առաջին նամակը՝ ուղղված Արփիարյանին. «Մտերմական սիրով կ'առաջարկիս, սիրելիդ իմ Արփիար, որ հոտ Մասիսի համար պանդուխտներու կյանքեն գրեմ...»[9]։ Եվ ընդառաջելով իր գրչեղբոր ցանկությանը՝ շարադրում է իր գոելիքի ծրագիրը, որ բովանդակում է պանդուխտի կյանքը՝ հարազատներից բաժանվելուց մինչև օտարության մեջ տառապելն ու մահանալը և կամ վերադարձը հայրենի տուն։

Արդարև, Կյուրճյանի նամակների գլխավոր նյութը դառնում է պանդխտությունը, որի հոսքը, ինչպես հայտնի է, մեզանում առանձնապես ուժեղացավ անցյալ դարի երկրորդ կեսին, երբ թուրքական բռնապետության վարած ազգային ու սոցիալական ճնշումների հետևանքով գավառներից զանգվածաբար պանդխտում էին աշխատավոր մասսաները։ Կյուրճյանի դիպուկ արտահայտությամբ՝ «պանդխտություն ըսված դարավոր հիվանդությունը» քայքայում էր գյուղն ու գյուղացիությանը։ Բազմաթիվ հայեր բնաշխարհից հեռանում էին իրենց ընտանիքի համար ապրուստի միջոցներ գտնելու հույսով։

Սխալ կլիներ կարծել, թե Կյուրճյանը մեզանում առաջինն էր, որ ուշադրություն դարձրեց պանդխտություն կոչվող սոցիալական չարիքի վրա։ Այդ խնդիրը միշտ էլ մտահոգել է հայ առաջադեմ մտավորականությանը դեռևս Նալբանդյանից սկսած։ Բայց իր ավագ ու կրտսեր գրչակիցներից ոչ մեկը այնպիսի վարակիչ ջերմությամբ ու չխամրող գույներով չի պատկերել հայրենի հողից բաժանված պանդուխտի վիճակը, ինչպես Կյուրճյանը։ Ավելին, իր սերընդակիցների մեջ նա միակն էր, որ ամբողջովին նվիրվեց գավառից Պոլիս պանդխտած աշխատավորների կյանքի պատկերմանը և հասարակության ուշադրությունը սևեռեց այդ «խոնարհ» ու արհամարհված մարդկանց վրա։

Կյուրճյանի գրչի տակ անցքերն ու անձերը դրոշմվել են այնպիսի ցայտուն երանգներով, որոնցից բուրում է կյանքի շունչը։ Գրողն իսկ խոստովանել է, որ ինքը տվյալ նամակաշարում հետևում է ոչ թե արվեստի կանոններին, այլ կյանքի ձայնին, ուստի և անզարդ խոսքերով վերարտադրում է կենսական երևույթները. «Միայն իրողություններ, ճշմարտություններ պիտի գնեմ թղթերուն վրա, իրենց ցուրտ մերկության մեջ»,— գրել է Կյուրճյանը և դրանով իսկ շեշտել «պանդուխտի կյանքեն» առնված նամակների կենսահորդ ոգին ու ճշմարտացիությունը. «Թող ատոնք խոսին... կենդանի և կրակոտ լեզվով» (էջ 35)։

Հիրավի, «կենդանի ու կրակոտ լեզվով» Կյուրճյանը պատմում է պանդխտության ուղին բռնած մարդկանց կյանքի ու տառապանքի մասին, նրանց որոնումների ու կորուստների մասին, հաճախ չիուսափելով թվերից ու մերկ փաստերից։ Նամակից նամակ նա խորացնում ու ծավալում է պանդուխտ գավառացիների կյանքի նկարագրությունը, ավելի լայնորեն բացահայտում նրանց հույզերն ու մտորումները և դրանք վարպետորեն փոխանցում ընթերցողին։

Իսկ ովքե՞ր են այդ մարդիկ՝ «գաղթական հայերը»։

Դրանք ազգային ճնշումից ու սոցիալական կեղեքումներից հալածված աշխատավորներ են, որոնք ստիպված թողնում են իրենց տունն ու տեղը և մեկնում օտարություն՝ աշխատանք ու վաստակ գտնելու հույսով. «...Ամեն շաբթու Տրապիզոնի շոգենավը կը թափե հոս այրած, խոնջ, կարմիր ու թառամ դեմքեր Վանեն, Մուշեն, Բալուեն, Զարսանճաքեն, Բաղեշեն, Քղիեն, Սեբաստիայեն...» (էջ 107)։

Հեղինակը, ինչպես տեսնում ենք, նույնիսկ նշում է այն գավառները, որտեղից մասսայաբար պանդխտում են արևմտահայ աշխատավորները։ Այն էլ

---

[9] Հրանդ (Մելքոն Կյուրճյան). Ամբողջական երկեր, Ա. Պանդուխտի կյանքեն. Փարիզ, 1931, էջ 21։ Այստեղից կատարված մեջբերումների էջերը այսուհետև կնշվեն տեքստում։

հետաքրքրական է, որ նրանք մեծ մասամբ առողջ, կորովի, աշխատունակ մարդիկ են, հեղինակի խոսքերով ասած՝ «գործող, վարող, ցանող ու հնձող ձեռքեր» (էջ 121), որոնց բացակայելն աղետաբեր է դառնում հայրենյաց համար. «... Հայոց ուժավոր սերունդը կը փակե դուռն ու դուրս կ՝իյնա հայրենիքեն՝ երթալ ուր որ փչէ ճակատագրին հովը...» (էջ 107)։ Բավական է ասել, որ գարնան առաջին օրերին, մեր հեղինակի իսկ վկայությամբ, երեք հազար երիտասարդ միայն Տարոնի գյուղերից են մեկնել պանդխտության։

Կյուրճյանը նշում է, որ պանդուխտների մեջ մեծ թիվ են կազմում անչափահաս երեխաները. «14—16 տարեկանները, խղճուկ հագնված, ոտքերու վրա հինցած պատռոտուն կոշիկ մը, որ 15—20 օր լեռ ու քար, սար ու ձոր կտրելով Պոլիս հասեր են» (էջ 36)։ Ըստ որում դրանցից շատերը որբեր են, որոնք հույսը դրած «հեռավոր ազգականի մը կամ դրացիի մը վրա», պարտքով մեկնում են Պոլիս, կարծելով թե այնքան դրամ կվաստակեն, որ ոչ միայն կըմարեն պարտքը, այլև ինչ-որ մի բան էլ կուղարկեն տուն։ Բայց իզուր. օրերով, ամիսներով պարապ նստում են և ոչ մի աշխատանք չեն գտնում։

Պանդխտության ելած մարդկանց մեջ քիչ չեն նաև ծերերը (Պողոս աղրար, վարպետ Ղազար, ծերունի Նադո և այլն), որոնց դիմաստվերները գծելով՝ հեղինակը ցույց է տալիս տվյալ իրականության դաժանությունն ու հակամարդկային բնույթը։

Եվ այսպես, փոքր ու մեծ, արհեստավոր թե ուսանող բռնում են պանդրխտության ուղին, որ հեղինակն իրավացիորեն անվանել է «կոռստական ճանապարհ»։ Գավառից ընկնելով քաղաք՝ պանդուխտներն ինչեր ասես որ չեն անում. բանում են որպես համալ, ջրկիր, հյուսն, որմնադիր, քարակոփ և վարում շարքաշ կյանք։ Սակայն բոլորը չէ, որ աշխատանք են գտնում, ինչպես Կյուրճյանն է վկայում՝ «մեկն անգործ, մյուսը ցավերու տակ ճնշված» ստառապում են «խաների» մեջ «փողոցի մուրացկաններեն ավելի չքավոր» (էջ 81)։ Բազմաթիվ են այն պանդուխտները, ովքեր «ամբողջ ամիսներ գրեթե տարվույն կեսը, առավոտուն հույսով կ՝արթննան, և ցերեկը հաց ալ չեն գտներ շատ անգամ» (էջ 82)։

Նկարագրելով պանդուխտների ծանր վիճակը, նրանց աշխատանքի ու կենցաղի սոսկալի պայմանները, Կյուրճյանը միաժամանակ ցույց է տալիս նրանց մարդկային բարձր առաքինությունները։ Նրանք պարկեշտ ու ամոթխած են, ավանդապահ ու պատվախնդիր, «բարության խորխտ, նվաստանալու անընդունակ», պատրաստ «չքավորությունը ծածկել արժանապատվության զգացումի տակ»։ Դրա հետ միասին, ինչպես նշում է հեղինակը, պանդուխտն ապրում է հարազատների կարոտով և երազում օր առաջ վերադառնալ հայրենի տուն, լինել մերձավորների շրջապատում. «Թող անոթի մեռնինք... բայց մեր սիրեցյալաց գոկին մեջ մեռնինք» (էջ 46)։

«Սիրեցյալաց» կարոտն ու սերը, հայրենիք վերադառնալու բաղձանքը մշտապես ուղեկցել են տարագիր հայերին, որոնցից քչերին է միայն հաջողվում վերադառնալ հայրենի երկիր։ Ավելին, հիվանդ ու ծերուկ պանդուխտները հաճախ մեռնում են հենց վերադարձի ճանապարհին և թաղվում «առանց քահանայի, խաչի ու ավետարանի»։

Աչքի առաջ ունենալով դարիբների թշվառ վիճակն ու ճակատագիրը՝ Կյուրճյանն ուզում է, որ փակվի պանդուխտի ճամփան. «Կ՝աղոթեմ, որ մեր պանդուխտներու առջև Տրապիզոնի ճամփան փակվի, իսպառ փակվի. կյանք չէ այս զոր կը վարեն այս մարդիկ փողոցներու անկյունը, պանդոկներու խորշերը, և ընդհանուր արհամարհանաց ծանրությանը ներքևը» (էջ 52)։ Եվ դա մանավանդ այն պատճառով, որ, հեղինակի կարծիքով, «պանդխտությունը եթե այսպես շարունակվի, մեր գավառներն անմարդ կ՝ընեն այսօր կամ վաղը...» (էջ 122)։ Եվ որպեսզի գավառը, ընաշխարհը անմարդ չմնա, գրողը պահանջում է ոչ միայն փակել պանդուխտի ճամփան, այլև վերջ տալ գաղթականության. վերադարձ դեպի հայրենի եզերք. ահա թե ինչի մեջ է տեսնում Կյուրճյանը տարագիր հայերի փրկությունը։ Դատապարտելով հայրենի տունը լքելու մտայնությունը՝ նա կոչ է անում ամրապինդ կապված մնալ հայրենիքին. «Պանդուխտներու հիվանդության լավագույն դեղն է իրենց հայրենիքն, և թերևս միակ

դեղը»,— ասում է հեղինակը և դրանով իսկ վերստին ընդգծում Հայրենի Հողի հետ ունեցած կապի կենարար նշանակությունը յուրաքանչյուր աշխատավորի, առավել ևս պանդուխտի համար։

Շարունակելով «Պանդուխտի կյանքեն» նամակաշարի գաղափարագեղարվեստական միտումը։ Կյուրճյանը հետագա տարիներին ևս որոշակի հետաքրքրություն է ցուցաբերել դեպի հասարակ մարդիկ։

Այս առումով ուշագրավ է «Խոնարհ խավերու մեջ» պատմվածքների շարքը, որն ընթերցողին սեղափոխում է մեծ քաղաքի ետնախորշերը և ցուցադրում հասարակ մարդկանց կյանքի այլևայլ կողմերը։ Ըստ որում ինչպես միշտ, այս դեպքում էլ հեղինակը կենսական փաստերի գեղարվեստական իմաստավորմամբ բացահայտում է տիրող իրականության աղաղակող հակասությունները. նա տեսնում է մի կողմից ուրիշների աշխատանքի արդյունքը իժռող մեծատունների, մյուս կողմից «խոնարհ խավերի», որոնք թեև գիշեր ու զօր տքնում են, բայց և մնում օրվա հացի կարոտ։

Սոցիալական կյանքի այդ հակադրությունը ցայտուն պատկերացում է գտել «Պատիժը» պատմվածքում, որը տոգորված է քննադատական պաթոսով։ Այստեղ հեղինակը գեղարվեստական խոսքի համոզիչ ուժով հիմնավորում է ժողովրդի մեջ տարածված հայտնի առածը՝ «գուն ալ պատիժդ կը գտնես» և արտահայտում խոր հավատ արդարության նկատմամբ։

Պանդուխտների կյանքից առնված սրտահույզ մի պատկեր է «Ժպիտ կերպարանքը» նովելատիպ գրվածքը։ Սեղմ ծավալի մեջ հեղինակը կարողացել է խտացնել ներքնախավերի կյանքի թշվառությունն ու ապրելու կամքը։ Հանձին Ակոբ-Շուշանի, պատկերված է կարիքի ու զրկանքի մեջ տառապող աշխատավորի կերպարը, որը զարմացնում է իր կենսատոկունությամբ ու դժվարությունները հաղթահարելու վճռականությամբ։ Պարզվում է, որ տղամարդու զգեստ հագած այդ շինարար բանվորը մշեցի Շուշանն է. տեսնելով, որ տանն այլևս «կարիպուրյան» մեկնող այր չի մնացել, իսկ ինքն ունի «քուրեր, պստիկ աղբրտանք», որոնք կարոտ են օրվա հացի, ստիպված գնում է Պոլիս, տղամարդ ձևանում (որովհետև կանանց շինարար բանվոր չէին ընդունում) և աշխատում արտակարգ եռանդով։ Երևույթը որքան արտասովոր է ու զարմանալի, պատկերացումը նույնքան համոզիչ է ու պատճառաբանված՝ շնորհիվ հեղինակի ստեղծագործական վարպետության։

Բոլորովին այլ հյուսվածք ունի «Պուլուտ ու Կեծակ» պատմվածքը, ուր պատկերված է ժողովրդական կյանքին բնորոշ մի կենցաղային դրվագ։ Հեղինակն անբռնազբոս տողերով պատմում է, թե ինչպես վարդավառի տոնին, ժամերգությունից հետո համալները «տաքցած օրվան հիշատակով ու օղիեն», խումբ-խումբ հավաքվում են Պոլսի գերեզմանոցը, որն այն ժամանակ զրոսավայր էր։ Նրանց տեղը, սակայն, գերեզմանոցի ամենից անշուք մասն էր, որտեղ շարվում էին դեմ առ դեմ, չորս կարգի բաժանված, յուրաքանչյուրն ութտասը հոգով։ Այդ պատրաստությունից հետո «թմբուկին ու զուռնային գոգռիչ հոսանքին տակ» նրանք սկսում են պարել, որն ուժի ու գեղեցկության յուրատեսակ մրցահանդես է։ Այդ ֆոնի վրա է, որ մեջտեղ է գալիս Պուլուտ մականունով ջրհանկիրը. նա ուներ «խրոխտ, ամբարտավան դեմք», «մոլեգին նայվածք» և ճնշող տպավորություն էր թողնում դիմացինի վրա։ Չնայած դրան, Ակոբ անունով համալը, որին Կեծակ էին անվանում, միանգամից դետին է սարնում այդ ինքնահավան ու սնապարծ ջրհանկիրին և դարձնում ծաղրուծանակի առարկա։ Սգի մեջ թաղված նրա ընկերները հերթով գալիս անցնում են համալների մոտով և իրար ցույց տալով միջահասակ, անմեղ դեմքով Ակոբին՝ ասում. «ա՛տ էր, ատ» (էջ 177)։ Շարադրանքից իսկ դժվար չէ նկատել հեղինակի համակրանքն ու սերը դեպի համալները, որոնք աչքի են ընկնում պարզությամբ, համեստությամբ և աշխատասիրությամբ։ Ժողովրդական խառնվածքին հատուկ այս և ուրիշ գծերի պատկերումը Կյուրճյանի մոտ որոշակի գաղափարական իմաստ ունի. դրանով նա ոչ միայն ծառանում էր բուրժուական աշխարհի, բռնության դեմ, այլև արտահայտում քաջ ու համարձակ, ուժեղ սրտի տեր հերոսի իր պատկերացումը։

Խորամուխ լինելով ազգային կյանքի ծալքերը, թափանցելով իր խոսքերով ասած՝ «խոնարհ խավերու մեջ», Կյուրճյանը կարողացել է որսալ այդ միջավայրին հարազատ դեպքեր ու դեմքեր և նրանց գեղարվեստական ընութագրմամբ հասնել խոր ընդհանրացումների։ Այդ է վկայում նաև «Մանկության հիշատակներ» շարքը, որի յուրաքանչյուր էջը տոգորված է ժողովրդական կյանքի խոր զգացողությամբ։ Հուշային վերապրումների միջոցով Կյուրճյանը վերարտադրում է իր մանկության տպավորիչ պատկերները, որոնք ցուցադրում են հայրենի օջախից վաղաժամ բաժանված մարդու կարոտն ու սերը, նրա թսխծախառն ուրախությունը։ Այս դեպքում ևս հեղինակը դառնում է գործող անձ հայրենի իր հուշերի մեջ, որոնց առանցքը, սակայն, նրա տեսած ու ապրած կյանքի անմոռաց հիշատակներն են։ Ժամանակ, միջավայր և մարդիկ,— ահա մանկական վերհուշերի բուն էությունը, որ զարմանալի անմիջականությամբ բացահայտել է Կյուրճյանը։

Այս շարքն սկսվում է «Կաղանդի հիշատակներ» (1892) պատումով. հեղինակը քնարական շնչով վերհիշում է Նոր տարվա նախօրյակը, որ այնքան ուրախություն է պատճառում երեխաներին։ Բայց որքան էլ մեծ է տարեմուտի ուրախությունը, այնուամենայնիվ, ինչ-որ տխրություն, թախիծ էլ կա մարդկանց դեմքին և տարեց մարդկանց, հատկապես պապիկի ու մամիկի այտերից հոսում են արցունքներ իրենց կորուստների ու հարազատների բացակայության համար։ Նրանք մտքով թռչում են «կորսվածներու ետևեն», անցնում Թիֆլիսից մինչև Կոստանդնոսի պարանոցը, Սուեզից մինչև Պանամայի ջրանցքը։ Ծերուկներն զգում են, որ կարող է պատահի հաջորդ ամանորին էլ իրենք չլինեն։ Իսկ փոքրերը, անգիտակ նրանց վշտերին, հոդեկան ապրումներին, շարունակում են անհոգ խաղալ ու հրճվել։ Ու թեև երկու տասնամյակից ավելի է անցել այդ օրից, բայց հեղինակի հիշողության մեջ վառ տպավորվել են մանկական այդ հիշատակները, որոնց մեջ առանձնապես «ջինջ ու անջինջ» են մնացել պապիկի արցունքը ճերմակ մորուքի թելերի վրա և ինքը՝ «ուրսունամյան, կյանքի պատկեր մը, կարոտի և ցավերու մաշած շոջանակի մը մեջ»։ Իսկապես, որքան հուզիչ է գրողի վերհուշը և մանավանդ տպավորիչ պապի նկարագիրը, որի հետ նա կապված է անմոռաց հուշերով։ Դա երևում է նաև «Ես ու պապիկս» արձակ քերթվածից, որը ստեղծված է ջերմ սիրով ու կարոտով հայրենի տան և դարբին պապի նկատմամբ։

Հաջորդ վերհուշը կրում է «Մեր տան ուխտը» վերնագիրը և որոշ իմաստով դրսևորում է հեղինակի աշխարհայացքի գյուղամետ էությունը և ստեղծագործական հետաքրքրությունների սլացքը։ Այստեղ է, որ «հայ տղայոց» ամենալավ ուխտատեղին Կյուրճյանը համարում է մեր գրերն ստեղծող և դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի սրբարանը։ Ուստի միանգամայն հասկանալի է, թե ինչու գրողի մանկական հիշատակների մեջ անփշրելի կանգնած է նրա անունը կրող ապառաժը, որի քարերին ամուր կառչած են մեր հավատքն ու սրտերը։

Մանկական տպավորությունների արդյունք է նաև «Մեր գերեզմանոցը», որտեղ դառնալով ետադարձ հայացքով հեղինակը նկարագրում է իրենց գյուղի նվիրական վայրերից մեկը՝ գերեզմանոցը։ Նա վերհիշում է զատկի մեռելոցը, երբ օրհնության հերթը հասնում է իրենց հանգուցյալներին. «Հոն էր ծերուկ պապս, կծկված ու դողդոջուն մեր քարերուն մեջ»։ Ու թեև այդ քարերի վրա ո՞չ թվականներ և ո՞չ էլ անուններ էին արձանագրված, բայց պապը բերանացի գիտեր բոլորին և պատգամում էր դրանք պահել անկորուստ։ Հեղինակին առավել զարմացրել է այն, որ պապը ցույց է տվել իր քարը՝ դրված «սիրական լակի մը քով՝ որու կենակից պիտի ըլլար մեռելութենե ետքը»։

Այս շարքը, որին պատկանում են նաև «Մեր հավատքը» և «Ս. Լուսավորիչ մեր տանը մեջ» գործերը, աչքի է ընկնում ինքնատիպությամբ, սոցիալ-հոգեբանական վերլուծումների նրբությամբ։

Օրավուր աճող ու հասունացող Կյուրճյանը շատ չանցած իր ուժերը փորձեց վիպասանության ասպարեզում, տալով «Ճախճախուտին մեջ՝ երկու

առանցքի վրա» վերնագրով վեպը, որն սկսեց տպագրվել «Սուրհանդակ» օրաթերթում՝ 1899 թ. սեպտեմբերի 18-ից, անստորագիր։

Հետաքրքրական է նշել, որ թերթը դեռևս մի շարաթ առաջ իր ընթերցողին ծանուցելով այդ վեպի հրատարակության մասին՝ միաժամանակ շեշտում է, որ հեղինակի ով լինելը «չպիտի հայտնենք առայժմ. չնախապաշարելու, չզլացնելու համար ընթերցողը, որուն՝ գործին գեղեցկությունը անձամբ գնահատելու և դատելու առիթը կ՝ուզեինք տալ։ Բավական է միայն ըսել, թե ծանոթ անուն մը ունի հեղինակը, և տասնյակ տարիներե ի վեր կաշխատակցի Պոլսո թերթերին»[10]։ Չնայած անստորագիր լինելուն, վեպը հենց սկզբից չերմ ընդունելություն է գտնում ընթերցողների շրջանում և առաջ բերում աշխույժ հետաքրքրություն։

Վեպը «Հառաջաբանի տեղ» ունի «Վեպի հերոսներուն» խորագրով սեղմ ընծայագիր, ուր հեղինակը նշում է, որ «ընկերության արդի պայմաններուն մեջ» կնոջ կյանքն ու պատիվը դեռևս նրա ձեռքում չեն. «... Գրքին հերոսուհիները մայր ու աղջիկ իրարու մեջ շաղապատված գոյություններ, տեսակ մը դատապարտվածներ տգիտության և մոլության, այնպիսի պարագաներու մեջ, ուր կյանքն իսկապես կովի հանգամանք ունի ճախճախուտի վրա...»։ Ապա ավելացնում է, որ «գրողն իրենց մահվանը ականատես վկա եղած է, բայց միշտ ճախճախուտին մեջ, աղավնիին թեվերուն վրա տարածուն»։ Այն օրից ի վեր թեև հեռացան, գունատվեցին մշուշի մեջ «այդ երկու լուսագեղ դեմքերը, մոր մը ու քոյր մը դեմքեր, իրենց հիշատակը ավելի պայծառացավ...»,— ասում է հեղինակը և շեշտում, որ «այս վեպը իրենց հիշատակին օհնություն մըն է, անկեղծ սրտի»։

Դժբախտաբար վեպի տպագրությունն ընդհատվելու պատճառով դժվար է վճռական խոսք ասել ընծայագրի մեջ շոշափված հարցերի և հեղինակային մտահղացման գեղարվեստական մարմնավորման մասին։ Մի բան, սակայն, պարզ է, բոլոր նշաններից երևում է, որ այս գործը լինելու էր լայնակտավ մի երկ, որտեղ հեղինակը պոլսահայ կյանքի լայն ֆոնի վրա պատկերելու էր հասարակական տարբեր խավերի պատկանող մարդկանց, հատկապես՝ կանանց կյանքն ու սոցիալական դրությունը։

Թե ինչու դադարեցվեց «Ճախճախուտքին մեջ...» վեպի տպագրությունը, թերթն ըստ էության ոչինչ չի ասում, բայց տպագրված հատվածներից պարզ երևում է, որ այն ընդհատվել է իր գաղափարական նպատակասլացության՝ բուրժուական իրականության անողոք մերկացման պատճառով։

Ստեղծագործական բեղուն կյանքով էր ապրում Կյուրճյանն առաջին համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին (1908—1914), երբ մամուլի էջերում հրապարակեց մի շարք նոր գործեր։

Դրանց մեջ հեղինակը շարունակում էր պատկերել հասարակ մարդկանց վիշտն ու տառապանքը, պանդխտության աղետները, բարքերի ալլասերումը և այլն։ Այդ տեսանկյունից ուշագրավ են նրա «Պոլսական նամակներ» (1908—1909) և «Կես-շինականի նամակների» (1910) շարքերը, որոնցում պարզորոշ ուրվագծված են իրական կյանքի տիպական երևույթներ ու դեմքեր։

Դա վերաբերում է մասնավորապես «Կես-շինականի նամակների» ակնարկաշարին[11], որն աչքի է ընկնում բնաշխարհիկ լեզվով, նյութի ընտրությամբ և հրապարակախոսական շեշտերով։ Այդ նամակները, որոնք իբր թե ուղարկված են Մուշից, հարազատորեն վերարտադրում են գավառի կյանքի այլևայլ կողմեր և մերկացնում իրականության հակասությունները։ Լավատեղյակ լինելով գավառական կյանքին՝ Կյուրճյանը կարողացել է վերարտադրել խավարի ու աղքատության մեջ խարխափող հայ շինականի տխուր առօրյան։

Պահպանելով տեղի ու ժամանակի ճշտությունը՝ հեղինակը ոչ միայն ակնարկներում, այլև պատմվածքներում հաճախ հանդես է գալիս որպես գործո-

---

10 «Սուրհանդակ», 1899, № 167։

11 «Ազատամարտ», 1910, № 301, 307, 319, 325, 331 և այլն։

դությունների ականատես կամ մասնակից։ Նա վերհիշում կամ նկարագրում է անցքեր, առաջին դեմքով պատմում իր հանդիպումների մասին կամ խորհրդածում դրանց շուրջը,— բոլոր դեպքերում էլ հեղինակային խոսքը հնչում է հուզական շնչով ու հրապարակախոսական շեշտով։

Այդ առանձնահատկությամբ են աչքի ընկնում Կյուրճյանի վերջին շրջանի պատմվածքները, որոնք թվով այնքան էլ շատ չեն, բայց բազմազան են թե՛ բովանդակությամբ և թե՛ արծարծած խնդիրներով։ Հայ բնաշխարհը, ժողովրդական կյանքի ելևէջները, աշխատավոր մարդկանց թշվառությունը, «գաղթականության ցավերը», ինչպես և բողոք անարդարության դեմ և աղատ ապրելու ձգտում,— այս և ուրիշ հարցեր արձագանք են գտել Կյուրճյանի պատմվածքներում, որոնց առաջատար բովանդակությունը, սակայն, աշխատավոր մարդու ծանր վիճակն է, նրա ողբերգական ճակատագիրը։ Ինչի մասին էլ գրել է նա, միևնույն է, բոլոր դեպքերում գրողի ուշադրության կենտրոնում տվյալ ժամանակի մարդն է (անկախ ազգությունից), իր սոցիալական կեցությամբ ու հոգեբանությամբ։

Վերցնենք, օրինակ, «Խանին վերի հարկը» պատմվածքը (1909), որտեղ ցույց է տրված, թե ինչպես երբեմնի պանդուխտների փոխարեն այժմ գավառացի հայ ուսանողներն են լցվել Պոլիս և քարշ են տալիս ողորմելի գոյություն։ «Տառապանքը գարձյալ տառապանք,— գրել է Կյուրճյանը,— փոխված է միայն իր ձևը...»։

Եվ իրոք, թեև մոտենում է ուսումնական տարին, բայց այդ ուսանող պատանիները տխուր են ու անհույս։ Նպաստի հանձնախումբը երկու ամիս առաջ հայտարարել է, թե իր կողմից կուտակված գումարը կը շարունակվի մինչև սգոստոսի վերջը, իսկ դրանից հետո այլևս «ոչինչ պիտի տրվի նպաստընկալ ուսանողներուն»։ Իբրև վերջին մխիթարանք, նույն հանձնախումբը առաջարկել է դիմել պատրիարքին, վարչությանը գրել իրենց վիճակի մասին և այլն։ Ու թեև ուսանողները դիմել էին, բայց ոչ մի պատասխան չէին ստացել։ Այժմ հանդիպելով նրանց գրողը խորհուրդ է տալիս կրկնել դիմումները. «Իբրև անկեղծ խոսք կ՚ըսեք թե հարկ է, որ կրկնենք մեր դիմումը»,— ասում է նրանցից մեկը, գրողին այլ բան չի մնում անելու, քան հրաժեշտ տալ տղաներին, իր հետ տանելով նրանց տխրաթախիծ հայացքը և մտորելով «անտիրական ուսանողների» մռայլ ճակատագրի մասին։

Կյուրճյանի լավագույն գործերից է «Զորս անիվներու վրա» պատմվածքը (1911), որը ներթափանցված է հոգեբանական նուրբ դիտողականությամբ։ Ահմադի հուզիչ սիրավեպը ցույց է տալիս սիրող հոգիների ողբերգական վախճանը սեփականատիրական հասարակարգի պայմաններում, ուր աշխատավոր մարդու ազնիվ ձգտումներն ու երազանքները խորտակվում են անգթորեն։ Հիրավի, որքա՜ն ազնիվ է Ահմադը և ինչքա՜ն ուժեղ է նրա սերը դեպի Բուզիեն, որ մահվանից հետո էլ շարունակում է հմայել սիրած երիտասարդին և ջերմացնել նրա հոգին։ Հեղինակին հաջողվել է գեղարվեստորեն ցուցադրել ճշմարիտ սիրո ուժն ու գեղեցկությունը և դրանցով ոգեշնչել ընթերցողին։

Կյուրճյանի այս շրջանի պատմվածքներում որոշակի արտահայտություն են գտել նաև պայքարի տրամադրություններ։ Այդ կարգի գործերից է «Թաթիկը զսպանակի վրա» պատմվածքը (1911)։ Տարեց մարտիկի պատմած «հրացանի պատմությունը» լավագույն ապացույցն է այն բանի, որ միայն շինված պայքարի միջոցով կարելի է պահպանել սեփական ունեցվածքն ու անկախությունը։ Մեծ հոր արձակած անվնաս կրակը հանկարծակիի է բերում թշնամուն և շփոթեցնում իր «թալանի ու կողոպուտի ծրագրին մեջ»։ Կողոպուտի ասպետները պարտություն կրած հեռանում են «ձեռքերնին ու շալակնին դատարկ ֆրլլահի թալանեն»։ Ու թեև թշնամին հարկադրված ետ է քաշվում, բայց «մեծ-հոր հրացանը իր ձեռքին մեջ կը կենար թաթիկը զսպանակին վրա»,— ասում է հեղինակը և դրանով իսկ շեշտում մարտական պատրաստության մեջ լինելու անհրաժեշտությունը։ «Թաթիկը իր զսպանակին վրա» խոսքը,— ասում է հեղինակը,— «տարիներով մեր պատիվն ու պահպանությունը եղավ»։

Եթե այս պատմվածքում հեղինակը ոգեշունչ տողերով կերտել է մեծ հոր կերպարը, շեշտելով նրա հերոսական խառնվածքն ու աղատաբաղձ ոգին, ապա «Իր հարսին համար» երկում ցայտուն պատկերացում են գտել հայ կնոջ արժանապատվության բարձր զգացումը և նրա համար ակտիվորեն մարտնչելու պատրաստակամությունը։ Հենց այդպիսին է Ջուհարը, որն անչափ սիրում է իր հարսին և նրան շրջապատել արտակարգ հոգատարությամբ։ Լինելով ավանդապահ հայ կին, նա չի կարող հանդուրժել, որ որևէ մեկը խեթ աչքով նայի իր հարսին և կամ պագշոտ հայացք նետի իր սեմից ներս։ Ահա թե ինչու, երբ կրքից կուրացած դերվիշը գիշերը սեմի տակից անցք է բացում և անսպասելի գլուխը հանում ներս, այդ պահին Ջուհարը կացնի ուժգին հարվածով թռցնում է նրա գլուխը, պաշտպանելով հարսի պատիվը։

Եվ սա միակ դեպքը չէ, երբ հեղինակն արծարծում է ժողովրդի, մարդկանց պատվի համար մարտնչելու գաղափարը։ Կյուրճյանը համոզված էր, որ միայն պայքարով, զենքի միջոցով կարելի է հաղթահարել «արյունոտ բոնսկալի մը սարսափը» և հասնել ազատ ու ապահով կյանքի։

Այդ գիտակցությամբ էր ապրում ու ստեղծագործում Կյուրճյանը մանավանդ իր կյանքի վերջին տարիներին, երբ իրար ետևից հրապարակեց այնպիսի ուշագրավ երկեր, ինչպիսիք են «Սևերուն մեջ», «Արյունոտ փետուրը», «Կկլակը, որ չի ծխար» (1911), «Մահվան ութօրեքը» (1912), «Առանց փիլոնի քահանան» (1913), «Բարի ճանապարհ» (1914) և այլն։ Դրանց մեջ հեղինակը մի կողմից մերկացրեց սուլթանական իրականության հակամարդկային բնույթը, տիրող վերնախավերի սոցիալ-բարոյական արատները, մյուս կողմից՝ խոր կարեկցանքով պատկերեց հայրենի հողից պոկված աշխատավոր մարդկանց թշվառ կացությունը։

Այն էլ նկատենք, որ Կյուրճյանը, թեպետ հաճախ նկարագրում է ծանր ու հոգեմաշ անցքեր, բայց երբեք չի ընկնում հոռետեսության մեջ. նա ընդհանուր առմամբ լավատես է և այդ լավատեսությունը սնվում է հայրենի հողի ու ժողովրդի պաշտամունքից։ Գրողի կարծիքով միայն հողի հետ կապված ժողովուրդը կարող է գոյատևել և շեն պահել հայրենի երկիրը, որը «մեր խանձարուրը եղավ, որուն կկապվին մեր առաջին խանդաղատանքներն ու մեր առաջին հիշատակները և որը կսիրենք այնպես, «ինչպես որ կսիրենք մեր մայրը...»։

Այսպիսի հայրենաշունչ ոգով է ներթափանցված Մ. Կյուրճյանի ստեղծագործությունը, որն աչքի է ընկնում թեմատիկ ու ժանրային բազմազանությամբ։ Մենք ծանրացանք գլխավորապես նրա գեղարվեստական երկերի վրա, բաց թողնելով հրապարակախոսական ու գրական-բանասիրական էջերը, որոնք նույնպես արժանի են հատուկ ուշադրության։

МЕЛКОН КЮРДЖЯН

Гр. А. САРКИСЯН

Резюме

Статья посвящена жизни и творчеству видного представителя реалистического направления западноармянской литературы прошлого столетия Мелкона Кюрджяна (1859—1915). Обстоятельно рассматриваются, в частности, серия писем «Из жизни странника» и циклы рассказов «Среди покорных слоев», «Воспоминания детства», а также незаконченный роман «В болоте между двумя полюсами». Анализ идейно-художественных тенденций этих произведений вскрывает демократическое мировоззрение писателя и обусловленную им разящую силу реалистического искусства. При освещении последних периодов творческой жизни Кюрджяна обращено особое внимание на те его рассказы («На спусковом крючке», «Во имя невестки» и др.), в которых нашли свое выражение настроения освободительной борьбы.